

N 22 ԱՄ ՇՀՇՁԲ-11/1-14

ք. Աշտարակ

« 1 » 02 2014թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Յ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋիԷՆՍԻ-Ալֆա» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Յ. Ֆարամազյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՍԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<ԻՆՏԵՐՆԵՏ>> ԿԱՊԻՏՐԱՄԱԴՐՄԱՆ Ժառանգությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Զննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրով վատարման (կամ խնամարար) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 520 000 (մեկ միլիոն հիգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկախիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 14թ. դեկտեմբերի 25-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրի-գուման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա ելել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագրի կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով որևէ կհանդիսանասույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություններ անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Ծուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման

արդյունքս ըստի ուսելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունն են ներկայացրել կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնությամբ չլուծված դեպքերում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավասական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**


Պատվիրատու

ՀՀ Արագածոտնի մարզպետարան  
ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ  
Վ. Պետրոսյան 4  
ՀՀՀՀ՝ 05004247  
Բանկ՝ ՏԳԲ  
Հ/Հ 900441041176  
Աշխատանքի տեղակայում



ՄԱՏԱԿԱՐԱՐ

ք. Աբովյան, Խաղաղության 1  
«Կոնստրուկտիվ» ՓԲԸ  
ՀՀՀՀ՝ 1930011989340100  
ՀՀՀՀ՝ 00096000  
Հ/Հ ռ.060 46 99 0



*[Handwritten signature]*  
Գևորգյան

*[Handwritten signature]*  
Տարապետյան

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՏՈՒՅՑ  
«ԻՆՏԵՐՆԵՏ» ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ Ծառայության ձեռքբերման**

h/h	Տեխնիկական բնութագրի տարրերը	Նկարագրությունը		
Ա	1	2		
Ներքին համակարգչային ցանցին միացված համակարգիչների համար ' Ինտերնետ' ցանցից օգտվելու հնարավորություն:				
1.	Ինտերնետային կապի տեսակը	Առանձնացված կապուղիով` օպտիկամանրաթելային մալուխով		
2.	Ինտերնետային կապի երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային հանգույցի և օգտվողի միջև	Առանձնացված կապուղիով` օպտիկամանրաթելային մալուխով` 80 Մբ/վրկ երաշխավորված		
3.	Ինտերնետային կապի սպասարկման նախապայմանները	Առանձնացված կապուղիով` օպտիկամանրաթելային մալուխով	ըստկապի պատվիրված արագության	անսահմանափակ
4.	Այլ պահանջներ	<p>Անհրաժեշտության դեպքում` պահուստային միացման առկայությունն ապահովող համարժեք արագործությունը</p> <p>Անհրաժեշտության դեպքում` հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում</p> <p>Սերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն` անհրաժեշտության դեպքում</p> <p>Օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում</p> <p>Կապի առկայություն, որակի և մատուցած ծառայության ծավալի &lt;on line&gt; վերահսկման հնարավորություն</p> <p>Ծառայության հետկապված ծրագրային ապահովում</p> <p>Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական</p> <p>Այլ ՓԻ հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով)</p> <p>Անհրաժեշտության դեպքում` անհրաժեշտ սարքավորումների տրամադրում` վաճառքի կամ վարձակալության հիմունքով</p> <p>Անհրաժեշտության դեպքում` օգտվողի կողմից ՀՀ տարածքից դուրս այցելած հանգույցների վերծանման տրամադրում</p> <p>Ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուի</p>		

.5.	Ինտերնետային կայքի հետ կապված լրացուցիչ ծառայություններ	<am> տիրույթում ենթատիրույթի գրանցումն պահպանում Էլեկտրոնային էջի կամ դրահայելու տեղակայում (հոսթինգ)
6.	Ինտերնետային կայքի ապահովում	<b>ՀՀ Արագածոտնի մարզպետարանի վարչական շենքում</b>
Ծառայության մատուցման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	31.12.2014


Պատվիրատու  
 ՀՀ Արագածոտնի մարզպետարան  
 ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ  
 Վ. Պետրոսյան 4  
 ՀՎՀՀ՝ 05004247  
 Բանկ՝ ՏԳԲ  
 Հ/Հ 900441041176  
 Աշխատակազմի ղեկավար՝

*[Handwritten Signature]*  
 Վ.Ս. Ստորգյան



ՄԱՏԱԿԱՐԱՐ

ք. Աբովյան, Խաղաղության 1  
 «Կոնվերսանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 1930011980040100  
 ՀՎՀՀ 00096001  
 Հ/Հ 000469901



Վարձատրող

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ\*


ՀՀ Դրամ

Գնման ենթակա ապրանքների Անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը	Նախատեսվում է վճարել 2014թ.													
			I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ը նդամենը	
			Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
<<ԻՆՏԵՐՆԵՏ>> ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ծառայությունների մատչելիությունը	2	3	1	380000	1	380000	1	1140000	1	1520000	1	1520000	1	1520000		

\*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

Պատվիրատու  
 ՀՀ Արագածոտնի մարզպետարան  
 ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ  
 Վ. Պետրոսյան 4  
 ՀՀՀՀ՝ 05004247  
 Բանկ՝ ՏԳԲ  
 Հ/Հ 900441041176  
 Աշխատակազմի ղեկավար

ՄԱՍԱԿԱՐԱՐ  
 Բ. Աբովյան, խողաղու թյան 1  
 «Կոնվերսիան» ՓԲԸ  
 Հ/Հ 1930011980040100  
 ՀՀՀՀ՝ 00096001  
 Հեռ. 060 46 99 01



Կատարող

Պատվիրատու

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հ հ \_\_\_\_\_

հ հ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

հ վ հ հ \_\_\_\_\_

հ վ հ հ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
Հ ԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<< \_\_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 20 թ.

Պայմանագրի անվանումը` \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը` << \_\_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 20 թ.

Պայմանագրի համարը` \_\_\_\_\_

Պատվիրատուն` \_\_\_\_\_ ի դեմս \_\_\_\_\_ և Կատարողը` \_\_\_\_\_ ի դեմս \_\_\_\_\_

նախատեսված` ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև` աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին` կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը \_\_\_\_\_ 20\_\_թ-ից \_\_\_\_\_ 20\_\_թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
<b>Ընդամենը</b>				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց \_\_\_\_\_ Աշխատանքը ընդունեց \_\_\_\_\_

\_\_\_\_\_ ստորագրություն

\_\_\_\_\_ ստորագրություն

\_\_\_\_\_ Ազգանուն, Անուն

\_\_\_\_\_ Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Կ.Տ.

Ազգանուն, Անուն